

բով այս գիւտը գտեր է որ իմանայ թէ մեռելին սրտին շարժմունքը բոլորովին դադրե՞ր է թէ չէ. վասն զի մէկուն սրտին զարնուածքը բոլորովին դադրածին պէս' ըսել է թէ մեռած է: Փլուփիէն մեռելին սիրտը սուր ու բարակ ասեղ մը կխոթէ. թէ որ իրօք մեռած է, ասեղը անշարժ կկենայ.

իսկ եթէ ողջ է, ասեղը կանոնաւոր կերպով կը շարժի: Ոմանք կարծեն թէ ասեղին ծակուածքէն հիւանդին սիրտը կխցուի, ու իրօք կընայ մեռնիլ. բայց այդ կարծիքին ծուռ եղածը Փլուփիէն շատ փորձերով ցուցուցեր է, եւ այժմ նոր փորձեր ալ կընէ զանազան կինդանեաց վրայ:

ՀԱՐՈՒՍ ՄՈՒՐԱՑԿԱՆ ՄԸ.

Մոսքուայի մէջ մուրացկան մը կայ որ ատենով տէրութեան պաշտօնի մէջ գտնուած ու աստիճան եւս առած է եղեր: Այս մարդը վրայի հին հագուստէն ու վրան պառկելու խսիրի կտորէն զատ բան չունի: Խը ընակարանին համար ամիսը 75 քոփեկ (3 ֆրանք) կվճարէ: Ամէն առաւտ կանուխ կելնէ կերթայ մուրալու, եւ եթէ ծեռքը ճերմակ հացի կտոր մը ընկնի՝ կծախէ եղեր: — Բարեկարգարանի պաշտօնեաները մօ-

տերս կընեն այն մուրացկանը, եւ կգտնեն վըրան 70,000 ֆրանքի փոխառութեան մուրհակներ, այսինքն ուրիշներու փոխ տուած այսքան սուրկին մուրհակները, Մոսքուայի դրամատունը իւր անունովը դրած սուրկին մէկ տոմսակը 48,070 ըուպլի արծ., եւ պատրաստ փող 6000 ըուպլի: — Էսելէ թէ սա եւս այն ողորմելիներէն է' որոց Աստուած հարստութիւն կուտայ, բայց վայելելու հրաման չի'տար, ինչպէս որ կըսէ Սողոմոն:

ԱՆԳԼԻԱՑԻՆ ԵԼԱՄ ԳԵՏՆԱԾՈՒԽԸ.

Բրիտանիոյ մէջ գտնուած ածխահանքերուն թիւը այժմ 2654 է. ասոնցմէ 1943-ը Անգղիոյ մէջ են, 235-ը Ռէէլսի մէջ, 405-ը Սկովտիոյ մէջ, եւ 71-ը Իւլանտիոյ մէջ: Ասոնց ամենէն ելած ածուխը տարին 65 միլիոն տակառաչափ է, որ 400 միլիոն փուտէն աւելի ըսել է: Ածխահանքերուն մէջ այժմ 250 հազար մարդու չափ կըանի: Ելած

ածուխին գինը՝ տեղէն չվերցուած՝ 16 միլիոն 700 հազար սթեռլին է: — Բայց յայնմանէ նոյն ածխահանքերուն մէջէն 14 միլիոն սթեռլինի երկամթ եւս կենէ: — Այս ահագին հարստութիւնը թերեւս հազարաւոր տարիներով թաղուած պիտի մնար՝ թէ որ Անգղիացւոց ազգին աշխատասիրութեամբն ու Ֆարտարութեամբը դուս չիանուէր:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐՈՒՆ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ.

Օրագրոյս Հոկտեմբերի 1-ին հանելուկն է 8 գիրը:

Տարւոյս Օրացուցին Հոկտեմբերի առաջին հանելուկն է 9-ին, — երկրորդը Կենալ:



Հրամայեցաք տպագրել. իթէողոսիա, ի 25 Հոկտեմբերի 1861. Գարրիկ Վ. Այվազեան.

Խնդարանի Խալիպեան Ռևումնարանի Հայոց: